

ԱՄԵՆՆՅՈՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

«Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ,
Զի բնակեն եղբարք ի միասին»:

(ՍԱՂՄ. ՃԼԲ 1)

Այս հանդիսավոր պահին, մեր հոգևոր զգայնության մեջ առավել իմաստ և գեղեցկություն է ստանում Ս. Սաղմոսերգուի խոսքը:

Մենք՝ տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ, տարբեր ժողովուրդների զավակներ, հեռու աշխարհներից եկած ու հավաքված այստեղ, Քրիստոսով եղբայրացած ենք և Քրիստոսով ուրախանում ենք Ռուս Պրավոսլավ Ս. Եկեղեցու մեծ տոնի առթիվ, որովհետև բոլորս էլ գործում ենք Քրիստոսի Ս. Ավետարանի փառքի համար: Եվ իրոք, ինչքա՜ն բարի է, ինչքա՜ն վայելուչ է, որ մենք, եղբայրներ ի Քրիստոս, բոլորս միասին ենք այսօր:

Քրիստոսի փառքի համար ապրող ու գործող մի մեծ և զորավոր զինվորություն է Ռուս Պրավոսլավ Ս. Եկեղեցին, որ դարեր, դարեր շարունակ հանդիսացել է ճշմարիտ հավատի բերդ և ոգեկան լույսի աղբյուր ու հոգևոր խաղաղության նավահանգիստ, ծովից ծով և օվկիանոսից օվկիանոս տարածվող Ռուսական աշխարհի մեջ: Եվ այսօր էլ նա նույն հավատի բերդն է, նույն լույսի աղբյուրը, նույն խաղաղության նավահանգիստը հավատացյալ հոգիների համար, իմաստուն և հեղինակավոր հովվապետությանը ներքև Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի:

Այսօր Պրավոսլավ Ս. Եկեղեցին և ռուս աստվածասեր ժողովուրդը, տոնական զգեստներ հագած, ցնծությամբ են նիշում պատմական թվականը, երբ քառասուն տարիներ առաջ վերահաստատվեց Ռուսական Եկեղեցու Պատրիարքությունը իր վեհիրավ բոլոր իրավունքներով: Այսպիսով նա վերստին տիրացավ իր ավանդական տիտղոսին և վերստին մտավ իր բուն և ճշմարիտ հոգևոր առաքելության ճանապարհի մեջ:

Մեզ, որպես Հովվապետը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, ուրախությամբ և գրկաբաց ընդունեցիք Մեզ եղած հրավերը, և ահա այստեղ եմք Ձեր բոլորի կողքին և Ձեզ նման երջանիկ, իբրև ճշմարիտ եղբայր և բարեկամ:

Ճշմարիտ եղբայր և բարեկամ, այո՛, որովհետև ահա ավելի քան երկու հարյուր տարիների քրիստոնեական եղբայրական սիրո և փոխադարձ հարգանքի ու գործակցության արմատացած կապեր կան մեր երկու եկեղեցիների և մեր երկու ժողովուրդների միջև: Այդ կապերը անքակտելի են դարձել մեր հավատացյալ ժողովուրդների աղոթքներով և արյունով գրված պատմությամբ: Այդ կապերը ամուր և անքակտելի կմնան հավիտյան: Եվ ինչպես անցյալի մեջ, նաև այսօր և միշտ, Հայ Եկեղեցին կլինի Ձեր կողքին, բոլոր Եկեղեցիների կողքին՝ համբարձումն Քրիստոսի Եկեղեցու, համբարձումն սիրո և եղբայրության ոգու մարդկանց միջև, համբարձումն աշխարհի խաղաղության:

Սիրելի՛ եղբայր Մեր ի Քրիստոս, Ձերդ Սրբություն Ալեքսի Պատրիարք Համայն Ռուսիոց, ընդունեցեք Մեր սիրո ողջույնը, որ բերում եմք Ձեզ քրիստոնեական հավատի ճնագույն կենտրոններից մեկի՝ Ս. Էջմիածնի սեղանից, որը Ինքը մեր Տերը և Փրկիչը հիմնեց Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, Դ դարի սկզբին, «ԸՍՏ ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԵԱՆ ՅԱՒԻՏԵԱՆՑՆ ԶՈՐ ԱՐԱՐ Ի ՁԵՌՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ» (Եփես. Դ 11):

Ընդունեցեք նաև Մեր և ամբողջ հայ հավատացյալ ժողովրդի սրտից բխած մաղթանքը, որ Աստված, պանպանիչը և բարյաց շնորհատուն, անսասան և միշտ փառքի մեջ պահե Ռուս Պրավոսլավ Ս. Եկեղեցին և Ձեր Պատրիարքական Գահը, ու ծաղկեցնե Ձեր հովվապետական գավազանը երկար ու երջանիկ տարիներ, խաղաղ, արևոտ օրերով:

Եվ «ՅԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ՈՒՐԱԽ ԼԵՐՈՒՔ» (Ա Թես. Ե 16), «ԵՒ ԻՆՔՆ ՏԷՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏԱՑԷ ՁԵԶ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՅԱՄԵՆԱՅՆ ԺԱՄ ՅԱՄԵՆԱՅՆ ԻՐՍ. ՏԷՐ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԻՆ ԸՆԴ ՁԵԶ» (Բ Թես. Դ 16), ԱՄԷՆ: